

ձին նորութիւն է, որ հոգևորական դասի՝ քահանաների՝ ժառանգները, թէ՛ ռուսների և թէ՛ հայերի մէջ, չպոյնի առանձնաշնորհումներ են վաւերում. ուրեմն բոլորովին անտեղի է բացականչութիւնը՝ «То-то въ Арменіи теперь столько кандидатов въ привилегированное сословіе» Պարոնը մի զրպարտութիւն էլ է անում. իբրև թէ՛ հայ հոգևորականութիւնը ժողովրդի մէջ նախապաշարմունքներ է տարածում Արարատի մասին (եր. 157)։

Այս գրքում մի քանի իրաւացի նկատողութիւններ էլ կան։ Ռուս ուսանողներին զարմացնում է Սևանայ հալոց վանքի սեղանի վրայ գտնել ռուս վարպետի վրձինին պատկանող մի պատկեր. «св. Смоленской Божіей Матери» վերնագրով։ Նոյնպէս երեւի իրաւացի է, որ Էջմիածնի թանգարանի

եկեղեցական զարդերի թանկագին քարերը, մարգարիտները ու աղամանդները հրաշքով փոխւել են հասարակ ապակու կոտորների... Ռուս ուսանողներին հիացրել են Արդուինի հալոհիւնները իրանց ղեղեցկութեամբ։

Գրքիս մէջ պատահում են օրինակ պապիսի սխալներ. «Шаримамъ» (եր. 130), «царь Хатумъ II» (եր. 132), «дворецъ Оумбата Багодарианца» (եր. 239) և այլն։

Առ հասարակ ալդ գիրքը կարդացւում է հետաքրքրութեամբ, նամանական հետաքրքրական կը լինի ռուս հասարակութեան համար, բայց ափսոս որ, դուցէ՛ ակամա, պիտի տարածեն հեղինակները մի քանի ևս ըստաւ, թիւր կարծիքներ հայերի մասին։

Լ. Ս.

ԳՆԱԶԱԿԻ ՆԱՀԱՆԳ. Համագումար վիճակագրական նիւթերէ՝ քաղած Կովկասի ազգաբնակչութեան ընտանիքների յուշակից։ Հրատարակութիւն Կովկասի վիճակագրական Մասնաժողովի։ (Елизаветопольская губернія. Сводъ статистическихъ данныхъ, извлеченныхъ изъ посемейныхъ списковъ населенія Кавказа. Изданіе Кавказскаго статистическаго Комитета)։ Тип. И. Мартыросянца. 1888։ Մի մեծ քարտէզով Գանձակի նահանգի, քառածալ մեծ, XVII և 475 էրես, անունների այլը բնական յուշակ ռուսերէն և ֆրանսերէն և յաւելած՝ նահանգի վարչական բաժանման մասին՝ 54 էրես։

Ներկայ հաստորը, որպէս ասած է լառաջաբանում, շարունակութիւն է նոյն վիճակագր. մասնաժողովի հրատարակած «Համագումարի»։ Որի վեցերորդ հրատարակութիւնն է կազմում ներկայ հաստորը։

Այս գործի խմբագրութիւնը պատկանում է իսկական պետական խորհրդական պ. Ջէլլլիցին, որը Կովկասի վիճակագր. մասնաժողովի կառավա-

րիչն է «գլխաւոր խմբագիր» անունով։ Այդ վերջին աստիճանի կարևոր գրքից օգուտ քաղելուց առաջ, անհրաժեշտ ենք համարում մի քանի խօսք ասել գործի խմբագրութեան մասին առհասարակ։ Ի՞նչ է Կովկասի վիճակագր. մասնաժողովը։ Դա՛ մի գլխանական հիմնարկութիւն չէ, օժտւած գիտնական ուժերով։ Այդ մասնաժողովը Կովկասի կառավարչութեան օր-

գանձերից մէկն է և Նորա կառավարիչը կամ «գլխաւոր խմբագիրը» նըշանակւած է ալդ պաշտօնի համար տանեակ տարիներէից ի վեր, առանց որ նա գլխակաւ կոչում ունեցած լինի վիճակագր. աշխատանքներ կատարելու Մասնագիտութեամբ պ. Զէյդլիցը բուսագէտ է, բոտանիկոս, Դատելով Նորա մինչ արժանաւ գործունէութիւնը, մենք գալիս ենք արն եզրակացութեան, որ պ. Զէյդլիցը անկարող է եղել թերևս մասնագիտութեան պակասը լրացնել: Շնորհիւ իւր մասնագիտական անպատրաստութեան, մինչ արժամ մի ալդքան մեծ անուն կրող հաստատութեան կառավարիչ չի կարողացել որ և է գրական-գիտական աշխատանքով մի անուն ստեղծել գլխակաւ աշխարհում և ոչ իսկ Վովկասի, համեմատաբար արնքան անձուկ, գրականութեան մէջ: Բայց երկու բան, որ չի կարելի մերժել պ. Զէյդլիցին՝ ալդ Նորա մեծ ջանասիրութիւնն է և կարողացածին չափ՝ բարեխղճութիւնը:

Ինքը վիճակագր. մասնագիտովը, որպէս ասացինք, գլխակաւ հիմնարկութեան ոչ մի պարմանը չունի: Հաւաքած տեղեկութիւնները կատարում են նահանգապետների, գաւառապետների, բայց անմիջապէս միայն պրիտանների, եսաստուլների և տանուտերերի ձեռքով: Եւ ինչ ճշդութեան գրաւական կարող են ներկայացնել ալդ մարդկանց ձեռքով հաւաքած տեղեկութիւնները— աւելորդ է անգամ ասելն ու խօսելը:

Այսքանը բաւական է հասկացնելու համար, որ ընթերցողը մեծ խրտութիւն պէտք է անի Եւրոպայում

հաւաքող վիճակագր. (ստատիստիքական, թւագրական) նիւթերի և մեղանում հրատարակող վիճակագր. նիւթերի մէջ, մանաւանդ ինչ վերաբերում է աղգաբնակութեան: Եւրոպայում կատարող թւագրութիւնը ներկայացնում է մեծամեծ գրականներ ճշդութեան համար և կամ գոնէ որոշում է ճշդութեան աստիճանը. իսկ մեղանում ալդ չը կա և բոլոր տեղեկութիւնները պէտք է ընդունեն իբր վերաստուգելի, և ուրեմն միայն մօտաւորապէս ճիշդ, և ալդ «մօտաւորապէսը» չաճախ շատ «հեռաւոր» կարող է լինել:

Ի հարկէ, նաև վարչական ձևով ժողովը ենթակա է կատարելագործութեան: Եւ ալպէս, 1873 թւականին կամերալը շատ աւելի անկատար էր, քան 1886 թւականին ժողովածը. մենք ինքներս առիթ ենք ունեցած ալդ բանին վերահաս լինելու Ուրեմն համեմատել 1873-ին վերաբերեալ թւերը 1886-ին հաւաքած թւերի հետ և դորանից եզրակացութիւններ դուրս բերել աղգաբնակութեան աճման աստիճանը ցոյց տալու համար՝ գրեթէ միտք չունի:

Այս ասելուց լետ, առաջ բերենք Գանձակի նահանգի վիճակագրութիւնից ընդհանուր եզրակացութիւնները:

Գանձակի նահանգը բաղկացած է հետեւեալ գաւառներից, որ մենք դասաւորում ենք իրանց մեծութեան համեմատ.

Գանձակի գաւառ. 8.398 քառ. վ. ¹⁾
 Զանգեզուրի » 6.644 »

¹⁾ Մի քառակուսի վերջաւորում—1.138031 քառակուսի կիլոմետրէն և 104.17 դեցետտիւնէն:

Ղաղախի	»	6.092	»
Շուշալ	»	4.446	»
Զիւանչիւրի	»	3.904	»
Նուխալ	»	3.284	»
Արեշի	»	28.22 ₉	»
Զերբալիւի	»	2.749	»
		3.8340. ₃	»

Բնակիչները խտութեան կողմից, գաւառները ալս հերթով են դասաւորւած.

Նուխալ, Շուշալ, Զանդեզուրի, Արեշի, Զերբալիւի, Գանձակի, Զիւանչիւրի և Ղաղախի գաւառները Առաջինում մի քառակուսի վերստի վրայ գալիս է 35.₆ բնակիչ, վերջինիս վրայ՝ 13.₉.

Ազգաբնակչական տեղեկութիւնները վերաբերում են միմիայն բնիկներին, ուրեմն չեն հաշւած՝ զինուորները, տէրունական և առևտրական և ալլ բնակեցութիւններում ծառայողները և օտարահպատակ, մանաւանդ պարս-

գիւղեր	Գանձ.	Արեշ.	Զերբ.	Զեւ.	Զանգ.	Ղաղ.	Նուխ.	Շուշ.	ամբ.	Նահանգ.
Թուրքական	120	105	130	171	149	80	96	158	»	1009
Հակական	36	17	28	32	81	43	24	92	»	353
Գրդական	—	1	8	13	91	—	—	—	»	113
Ռուսական	8	—	1	—	1	3	—	1	»	14
Հապուտլի	—	7	—	—	—	—	2	—	»	9

Յետոյ գալիս են՝ քիւրդները 7, թաթերները 5, Ուտիական 4, գերմանական 2, գնչուական 1, հրէական 1՝ ամբողջ նահանգում:

Նկատենք, որ պ. Զէյդլիցը ազգերը ալսպիսի շարքով է դասաւորել՝ ռուսներ, գերմանացիք, թաթեր, քուրդեր, հայեր, գնչուներ (ցիգան), հրէաներ, քիւրդներ, Հապուտլեցիք, Ուտիացիք, Թուրքեր: Նկատողութիւնները աւելորդ են:

կահպատակները: Բայց այդ ամենքը միասին կազմում են ազգաբնակչութեան միայն 2.3%₀, ալսպէս որ շատ մեծ բան չեն աւելցնում եղածի վրայ:

Ահա գիւղական համայնքների և գիւղերի ու նոցա բնակիչների թիւը զանազան գաւառներում՝

	համայնք	գիւղ	հոգի
Գանձակի գաւ.	56	166	102.594
Արեշի	44	131	51.945
Զերբալէլի	40	167	46.412
Զիւանչիւրի	46	216	54.950
Զանդեզուրի	76	326	123.997
Ղաղախի	52	128	84.888
Նուխալ	58	133	91.119
Շուշալ	60	251	99.462
	432	1518	655.257

Այդ 1518 գիւղերը բաժանւում են ալսպէս, նալած թէ իւրաքանչիւրում որ աղգի բնակիչներ են գերակշիւ թիւը կազմում:

Գանձակի ամբողջ ազգաբնակչութիւնն է	728,251	հոգի երկու օեռի, որոնք կազմում են	123,838	ծուխ կամ տուն:
-----------------------------------	---------	-----------------------------------	---------	----------------

Այդ ազգաբնակչութիւնը և տների թիւը ալսպէս են խմբւած նահանգի քաղաքներում և գաւառներում.

Քաղաքներ	տուն.	հոգի.
Շուշի	5779	26.806
Նուխի	5268	25.894
Գանձակ	4082	20.294

Գաւառներ

Ղաղախիներ	11.524	84.888
Զիւանշիրիներ	9694	54.950
Արեշիներ	9617	51.845
Զերբապիւրիներ	8663	46.402
Զանգեզուրիներ	19.447	123.997
Գանձակիներ	16.458	102.594
Շուշաներ	16.368	99.462
Նուխաներ	16.368	91.119

Մի ծովսի վրայ միջին թւով գալիս է հայերի մէջ 7. ₁ հոգի.

թուրքերի մէջ 5. ₁ հոգի.

Այդ նորանիցն է, որ հայերի մէջ ընտանեկան բաժանմունք աւելի քիչ է լինում, քան թուրքերի մէջ:

Գիւղերի մեծութիւնը շատ դանաղան է: Ընդհանուր առմամբ, Գանձակի նահանգում ամենից մեծ գիւղերը Նուխաւ գաւառումն են: Եթէ այդ գաւառի գիւղերի ծովսերի թիւը բաժանենք այդ գիւղերի թւի վերայ, կը տեսնենք, որ, միջին թւով, Նուխաւ գաւառում մի գիւղ ունի 120. ₃ ծովս, մինչդեռ Զիւանշիրի գաւառում՝ միմիայն 44. ₃ տուն կամ ծովս:

Աղգութիւնների նկատմամբ, Գանձակի նահանգում, միջին հաշուով, մի թուրքի գիւղ ունի 358 երկու սեռի բնակիչ, ուստաց գիւղը՝ 559. ₉, հայկական գիւղը՝ 639. ₇ եւ գերմանական գիւղը՝ 947 երկու սեռի բնակիչ: Ասել է թէ՝ հայկական գիւղերը այդ նահանգում շատ մեծ են, և քիչ է մընում, որ կրկնապատիկ աւելի մեծ լինին, քան թուրքական գիւղերը: Եւ դեռ այդ հաշիւ մէջ Ուտիացոց Նիժ և Վարդաշէն գիւղերը հայկական չեն հաշւած, այլ սոսկ Ուտիական, մինչդեռ լայնի է, որ Նիժի անագին գիւղի ուտիացիք, որպէս Վարդաշէնի

ուտիացոց մեծագոյն մասը, լուսաւորչական են և իրանց համարում են հայ, ուրեմն նոքա հայեր են աղգութեամբ և ուտիական են միմիայն ցեղով:

Նկատւած բան է, որ Կովկասի բոլոր նահանգներում, բացի հիւսիսային Գաղստանից, արու բնակիչները աւելի են իգականներէ: Եւրոպայում ընդհանրապէս է՝ Ներկայ գիրքը այդ նշանաւոր երևութի բացատրութիւնը չի տալիս, բայց իրաւացի կերպով ակնարկում է, որ դա պէտք է կապ ունենայ կենցաղավարական և կրօնական հակացոյցների հետ ու մանաւանդ աղգերի առանձնաւորութիւնների հետ: Այդ նահանգում միմիայն դերմանացոց մէջ իգական տարրը արականից աւելի է, մնացած բոլոր աղգութիւնների մէջ հակառակն է և ահա թէ ինչպէս.

100 արու բնակիչների վերայ ընկնում է Գանձակի նահանգում՝

Գերմանացոց մէջ 103. ₃₃ իգական

Ռուսների մէջ 90. ₉₈

Հայերի մէջ 82. ₇₉

Թուրքերի մէջ 73. ₇₁

Իսկ ամբողջ նահանգում, բոլոր աղգութիւնները միասին առած, 100 արուի վերայ ընկնում է 77. ₈₁ իգական, մինչդեռ Եւրոպայում, ընդհանրապէս առած, 100 արուին ընկնում է մօտ 105 իգական: Ժողովրդի աճման տեսակէտից աւելի պէտք է ցանկալ, որ իգականների թիւը ըստոր չը լինի արականների թւից: Վերջը առաջ բերած համեմատական թիւերը կարեւոր են նաև ուրիշ խնդիրներ լուծելու համար. օրինակ, նոքա շօշափում են սեռական բարոյականութեան խնդիրը:

Հատ հետաքրքրական ցուցակ է տալիս դիրքը բնակիչների թվի մասին ըստ հասակի: Ափսոս, որ այդ թվերը ճիշդ ստատիստիքական մեթոդով չեն հաաքած և մեր հաւատը այդ պատճառով թերի է դէպի մասնաժողովի տաժ թվերը. բայց և այնպէս, բանից դուրս է գալիս, որ անչափահասներ մեղանում, համեմատաբար, շատ աւելի հոգի կան, քան Արեւմտեան Եւրոպայում (Գերմանիա, Ֆրանսիա և այլն). իսկ չափահասներ՝ շատ աւելի քիչ: Ահա այդ թվերը: Ամեն 10.000 արական բնակիչների վերաջ գալիս են՝

	հասակ	Արեւմ. հայերի	թուրք.
	Եւրոպ.	մէջ	մէջ
0—15	3356	4101	4171
16—20	876	1264	1378
21—60	4944	4467	4251

Գաւառներ

	Գանձակ,	Արեւ.,	Զիրբ.,	Զեւ.,	Զանգ.	Ղազ.	Նուխ.	Շուշ.	Նախանգ
Թուրքեր	67%	72%	72%	61%	31%	57%	70%	41%	56%
Հայեր	26	24	25	29	46	39	16 ¹⁾	58	35.4 ²⁾
Քուրդեր	—	0.7	3	10	21	—	—	—	4.6

1) Իսկ լուսաւորչական Ուտիացոց հետ միասին աւելի քան 22%:

2) Լուսաւորչական Ուտիացոց հետ միասին 36%-ից աւելի:

Ռուսներ (թէ ուղղափառ և թէ աղանդաւորներ) մի քիչ շատ են (5%) միայն Գանձակի գաւառում, իսկ ամբողջ Նախանգի միայն 1% են կաղմում:

Մնացեալ աղգութիւնները շատ չնչին տեղ են բռնում և ոչ մէկը նոցանից մի պրօցենտի չի հասնում: Ընդհանրապէս խօսած՝ թուրքերը և հայերը կաղմում են Նախանգում 91.4% մնացածները միասին՝ 8.6%:

Որպէս կարող է տեսնել ընթեր-

61—70	545	100	136
70-ից անց	279	68	64

կարճն ասած, այդ ցուցակը ցոյց է տալիս, որ Արեւմտեան Եւրոպայում երեխաները միայն մեռնում են, հայերիս մէջ՝ մեռնոտում, իսկ թուրքերի մէջ՝ կոտորում:

Ազգութեան կողմից, Գանձակի Նախանգում առաջին տեղն են բռնում թուրքերը, յետոյ հայերը. մնացեալները համեմատաբար շատ աննշան են:

Ահա թէ որքան պրօցենտ են ամեն աղղից քաղաքներում, գիւղերում և ամբողջ Նախանգում, եթէ կոտորակները կողուացելու լինենք:

Քաղաքներ

	Գանձակ,	Նուխի,	Շուշի
Թուրքեր	55%	80%	43%
Հայեր	44%	18%	57%
Քուրդեր	—	—	—

ցողը, հայերը մեծամասնութիւն են կաղմում միայն Շուշաւ և Զանգեզուրի գաւառներում և Շուշի քաղաքում:

Գրքի մէջ ցուցակներ կան լեզուների և գրադիտութեան մասին: Քիչ հաւատ ենք ընծալում այդ ցուցակներին. բայց ըստ այդ ցուցակների, Գանձակի Նախանգում հայերից 8% գրադէտ են, երեք քաղաքներում 42.8%:

Կրօնական տեսակետից՝ Նախանգը երկրպագնում է հետեւալը: Ամենից

շատն են հալ-լուսաւորչականները (36.6⁰/0); գրեթէ նոցա հաւասար են մահմեդական-չիաները (36.6⁰/0), չե-տոյ գալիս են սիւննիները (25.1⁰/0), ուստի աղանդաւորները կազմում են 1⁰/0, իսկ ուրիշ կրօն դաւանողները աւելի էլ աննշան են և միասին կազմում են միայն 1.6⁰/0 նահանգի ազգաբնակչու-թեան թւի: — Մահմեդականներից սիւննիները աւելի են քան չիաները՝ Նուխաւ և Արեշի գաւառներում մի-այն, իսկ մնացեալ բոլոր վեց գաւառ-ներում չիաները աւելին քան սիւն-նիները: Սիւննիներ չը կան ամենևին Գանձակի և Շուշալ գաւառներում, իսկ չիաներ կան բոլոր 8 գաւառնե-րում:

Հալ-լուսաւորչականները աւելի են քան որ և է ալ կրօն դաւանողներ միմիայն Շուշալ գաւառում և Շուշի քաղաքում:

Դասակարգելու Ամբողջ նա-հանգում բարձր աղեական դասա-կարգը (թուրք խաներ, աղալարներ, բէգեր և հալ մելիքներ) կազմում է բնակիչների թւի 3.31⁰/0, հալ հոգե-րակութիւնը կազմում է 288.0⁰/0 հալ ազգաբնակչութեան (որը ի հարկէ, ահագին տոկոս է), մահմեդական հո-գերականութիւնը կազմում է միայն 0.81⁰/0 մահմեդական ազգաբնակչու-թեան: Գիւղացիք կազմում են 85.81⁰/0 իսկ քաղաքներից դուրս՝ 95⁰/0-ից քիչ աւելի: Այդքան գիւղացիներից՝ Տէրունական հողի վերայ են 362.499

կալածատներին 255.556
Սեպհական 7.074
Ջանադան հողերի 625.129¹)

Ուրեմն տէրունական հողերի վրայ բնակւող գիւղացիք կազմում են մօտ 58⁰/0, կալածատներին հողերի վերայ՝ 41⁰/0, իսկ սեպհականատէրեր գիւ-ղացիք կազմում են միայն 1.118⁰/0:

Կալածատիրական (կալածատե-րերի, վանքերի և մեշիտների) հողե-րի վերայ բնակւողներ ամենից շատ են Շուշալ գաւառում, տէրունական հողերի վերայ բնակւող ամենից շատ են Նուխալ գաւառում: Համեմատա-բար ամենից շատ գիւղացի սեպհա-կանատէրեր կան Արեշի գաւառում (գաւառի գիւղացիների թւի 3.66⁰/0), իսկ Ջիւանշիրի և Ղազախի գաւառ-ներում սեպհականատէր գիւղացիք ամենևին չկան:

Գիրքը վերջանում է տեղեկութիւն-ներով անդամալուծների և կոյրերի թւի մասին: Բանից դուրս է գալիս, որ կոյրութիւնը բաւականի տարածւած է թէ հայերի և թէ թուրքերի մէջ, ալս զանազանութեամբ, որ հայերի մէջ աւելի արականներն են, թուրքե-րի մէջ՝ աւելի իգականները ալս պա-կասութեամբ: Ընդհանուր առմամբ ալս երկու ազգերի մէջ կոյրերը կազ-մում են ընդհանուրի 0.17⁰/0 ալսինքն 779 հոգի:

Ա.

¹) Անհատականի են թւում մեղ այդ-թւերը, քանի որ նահանգի բոլոր ազգա-բնակչութիւնը է միայն 728.251 հոգի: